Հավելված
ՀՀ կառավարության 2017 թվականի
հունիսի 1-ի N 658 - Ն որոշման

Օ Ր Ի Ն Ա Կ Ե Լ Ի Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր

ԽՄԵԼՈՒ ՋՈՒՐԸ ՈՌՈԳՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ

_____ ____ _____20_____թ.
(պայմանագրի կնքման վայրը)

Մատակարարը _____
(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը)
ի դեմս _____,
(անունը, ազգանունը, պաշտոնը)
որը գործում է _____հիման վրա, մի կողմից,

և բաժանորդը _____,
(անունը, հայրանունը, ազգանունը)
_____,
(բնակության վայրը, խմելու ջրից ոռոգում կատարվող հասցեն)
մյուս կողմից, համատեղ կոչվելով կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը՝ հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Խմելու ջուրը ոռոգման նպատակով օգտագործվում է տնամերձ հողամասերը (այգիները) և այլ հողամասերը խմելու ջրով ոռոգելու համար՝

1) օգտագործված ջուրը հաշվարկվում է՝ հաշվի առնելով տվյալ տարածքում գործող ոռոգման նորմերը՝ ըստ ոռոգման ռեժիմի, հողամասի չափի և մշակվող մշակաբույսերի տեսակի: Սույն ենթակետում նշված կարգի համաձայն հաշվարկվում է ոռոգման համար պահանջվող ամսական ջրի սահմանաքանակը, որն ամրագրված է սույն պայմանագրի 7-րդ կետում.

2) ամբողջ սպառված ջրաքանակը հաշվարկվում է առևտրային հաշվառքի սարքի փաստացի ցուցմունքին համապատասխան և սույն պայմանագրի 7-րդ կետով սահմանված ժամանակահատվածի համար բաժանվում է երկու մասի՝ օգտագործված խմելու ջրի մասով վերահաշվարկը կատարվում է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից հաստատված խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման

կանոնների, իսկ ոռոգման նպատակով օգտագործված ջրի դեպքում՝ կողմերի միջև կնքված պայմանագրի համաձայն՝ հետևյալ կարգով՝

ա. բաժանորդի կողմից ապառված խմելու ջրի քանակը հաշվարկվում է՝ համաձայն սույն պայմանագրի 2.4-րդ կետի 7-րդ ենթակետի, բայց ոչ ավելի, քան առևտրային հաշվառքի սարքով հաշվառված քանակը,

բ. բաժանորդի կողմից ոռոգման նպատակով օգտագործված ջրի քանակը հաշվարկվում է առևտրային հաշվառքի սարքով հաշվառված քանակի և սույն ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված կարգով հաշվարկված խմելու ջրի քանակի տարբերությամբ, բայց ոչ ավելի, քան սույն պայմանագրի 7-րդ կետով ամրագրված սահմանաքանակը,

գ. սույն ենթակետի «բ» պարբերությամբ սահմանված կարգով հաշվարկված ոռոգման նպատակով օգտագործված ջրի քանակը սույն պայմանագրի 7-րդ կետով ամրագրված սահմանաքանակը գերազանցելու դեպքում գերազանցող մասը (քանակը) համարվում է որպես բաժանորդի կողմից սպառված խմելու ջրաքանակ.

3) վճարման ենթակա գումարը (մատուցված ծառայության արժեքը) հաշվարկվում է համապատասխանաբար խմելու ջրի մասով՝ համաձայն Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից սահմանված խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոնների և սակագների, իսկ ոռոգման նպատակով օգտագործված ջրի մասով՝ ոռոգման ջրի օգտագործման համար սահմանված վճարների և սույն պայմանագրի հիման վրա:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Մատակարարի և բաժանորդի փոխհարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն պայմանագրով և այլ իրավական ակտերով:

2.2. Բաժանորդը պարտավոր է՝

1) վճարել ոռոգման նպատակով օգտագործված ջրի դիմաց՝ սույն պայմանագրով սահմանված կարգով ու ժամկետում, մինչև յուրաքանչյուր ամսվան հաջորդող ամսվա 22-ը.

2) թույլ չտալ առևտրային հաշվառքի սարքի խախտում.

3) ջուրն օգտագործել ըստ պլան-ժամանակացույցի.

4) մատակարարի ներկայացուցչի կողմից ծառայողական վկայական ներկայացնելու դեպքում չխոչընդոտել նրա մուտքն իր սեփականությունը հանդիսացող կամ այլ իրավական հիմքով տիրապետվող տարածք՝ առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքի

գրանցման, ապօրինի միացման կամ առևտրային հաշվառքի սարքի խախտման դեպքերի առկայության համատեղ ստուգման նպատակով.

5) առևտրային հաշվառքի սարքի խափանման վերաբերյալ կասկած առաջանալու դեպքում անհապաղ տեղեկացնել մատակարարին.

6) մատակարարին տրամադրել համայնքի ղեկավարի կողմից հաստատված փաստացի բնակվողների վերաբերյալ փաստաթուղթ.

7) ջրամատակարարվող տարածքի նկատմամբ իրավունքի դադարման դեպքում դիմել մատակարարին՝ վերջնահաշվարկ կատարելու, սույն պայմանագիրը լուծելու և ծառայությունների մատուցումը դադարեցնելու համար:

2.3. Բաժանորդն իրավունք ունի՝

1) պահանջելու, որ մատակարարն առևտրային հաշվառքի սարքի հետ կապված որևէ աշխատանք՝ ներառյալ դրա ապահավաքակցումը կամ ստուգաչափումը, իրականացնի իր ներկայությամբ.

2) ոռոգման սեզոնից դուրս ժամանակահատվածում դիմելու մատակարարին իր ջրաչափական սարքն ապահավաքակցելու համար.

3) մասնակցելու առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքի գրանցմանը:

2.4. Մատակարարը պարտավոր է՝

1) ապահովել բաժանորդին ծառայությունների հուսալի մատուցումը.

2) իրականացնել առևտրային հաշվառքի սարքի կապարակնքումը.

3) իր հաշվին իրականացնել առևտրային հաշվառքի սարքի ապահավաքակցումը և ստուգաչափումը.

4) բաժանորդին իրազեկել ջրամատակարարման դադարեցման կամ ընդհատման և ջրամատակարարման վերականգնման պատճառների ժամկետների մասին բաժանորդին.

5) կազմել և բաժանորդին ներկայացնել մատուցված ծառայությունների քանակի և դրա դիմաց բաժանորդի կողմից վճարման ենթակա գումարի վերաբերյալ տեղեկատվություն.

6) գործարկել բաժանորդին հասանելի շուրջօրյա հեռախոսակապ.

7) ոռոգման սեզոնի ընթացքում բաժանորդի կողմից սպառված ջրաքանակից խմելու ջրի ծավալի տարանջատումը (հաշվարկը) կատարել հետևյալ չափաքանակներով՝ ըստ օրինակելի պայմանագրի անբաժանելի մասը կազմող պլան-ժամանակացույցի և 1 անձին օրական նախատեսված 200 լիտր խմելու ջրի չափաքանակով:

2.5. Մատակարարն իրավունք ունի՝

1) բաժանորդին ծառայողական վկայական ներկայացնելով և վերջինիս սեփականությունը հանդիսացող կամ այլ իրավական հիմքով տիրապետվող տարածք մուտք գործելով՝ բաժանորդի հետ համատեղ ստուգելու առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքը, ապօրինի միացման կամ առևտրային հաշվառքի սարքի խախտման դեպքերի առկայությունը.

2) դադարեցնելու բաժանորդի ջրամատակարարումը և միակողմանի լուծելու սույն պայմանագիրը՝ բաժանորդի կողմից սույն պայմանագրի 2.2-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված պարտավորությունն առնվազն 2 անգամ անընդմեջ չկատարելու դեպքում:

3. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

3.1. Պայմանագրային պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում կողմերը պատասխանատվություն են կրում սույն պայմանագրով, օրենքով սահմանված կարգով:

3.2. Մատակարարը և բաժանորդը միմյանց պատճառած վնասի համար կրում են պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով:

4. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺ (ՖՈՐՍ ՄԱԺՈՐ)

Կողմերը սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների խախտման համար պատասխանատվություն չեն կրում, եթե այն հետևանք է ֆորս մաժորի: Սույն պայմանագրի իմաստով ֆորս մաժոր են համարվում արտակարգ և անկանխելի այն դեպքերն ու հանգամանքները, որոնք առաջացել են կողմերի կամքից անկախ և, միևնույն ժամանակ, անկախ վերջիններիս գործադրած ջանքերից, խոչընդոտել են պարտավո-րությունների կատարմանն ուղղված կողմերի գործողություններին: Սույն պայմանագրի իմաստով արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ են բնական և տեխնածին աղետները, բնության ուժերի արտասովոր դրսևորումները, գործադուլները, հասարակական անկարգությունները, ահաբեկչությունները, պատերազմները, ապստամբությունները: Կողմերը պարտավոր են նշված իրավիճակների մասին անհապաղ տեղեկացնել միմյանց՝ նշելով դրանց հետևանքների վերացման հնարավոր ժամկետները:

5. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

Կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Սույն պայմանը չի սահմանափակում կողմերի իրավունքը՝ վեճերը լուծելու դատական կարգով:

6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից, և խմելու ջուրը ոռոգման նպատակով օգտագործելու մասով պարտադիր է դառնում ոռոգման սեզոնի ամբողջ ընթացքում:

6.2. Պայմանագիրը կարող է փոփոխության ենթարկվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

6.3. Պայմանագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

7. ՊԼԱՆ-ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ապրիլ …… մ^3 Հուլիս …… մ^3

Մայիս …… մ^3 Օգոստոս …… մ^3

Հունիս …… մ^3 Սեպտեմբեր …… մ^3

ԸՆԴԱՄԵՆԸ …… մ^3

8. ԿՈՂՄԵՐԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Մատակարար

_____

Գտնվելու վայրը

_____

Հեռախոսահամարը_____

ՀՎՀՀ-ն_____

Էլ. փոստ _____

Հ/հ _____

Բանկ _____

Ղեկավար

_____

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

Կ.Տ.
(առկայության դեպքում)

Բաժանորդ

_____

Բնակության վայրը

_____

Ծանուցման հասցեն

_____

Էլ. փոստ _____

Հեռախոսահամարը_____

Անձը հաստատող փաստաթղթի տվյալներ՝

_____

_____

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ